

Ֆինանսավորել է Եվրոպական միությունը

«Այս նախագիծն իրականացվում է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակությունը միայն Ուկրաինայի էկոլոգիական ազգային կենտրոնի և գործընկերներ կազմակերպությունների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրամիության տեսակետները »:

Կոնֆերանսի բանաձևը
«Էկոհամակարգի մոտեցումը հիդրոէներգետիկայում.
Արևելյան գործընկերության երկրներում իրականացման հեռանկարները»
ք.Կիև, 04.10.19

Վերջնական բանաձև
հաստատվել է Կիևում, 04.10.2019թ.

*Գիտաժողովի մասնակիցները՝ հաշվի առնելով գետերի վիճակը
Արևելյան գործընկերության երկրներում և հասկանալով հիդրոէներգետիկայի
ներդրումը դրանց քայքայման մեջ, անհրաժեշտ են համարում հայտարարել
հետևյալը.*

Հաստատում ենք

1. Հիդրոէներգետիկական Արևելյան գործընկերության երկրներում ներկայումս հանդիսանում է ազգային էներգետիկ համակարգերի կարևոր մաս և առաջնային դեր է խաղում երկրների էներգետիկ անվտանգություն ապահովման գործում: Հիդրոէներգետիկական որոշակի առավելություններ ունի, որոնց թվում են.

- էլեկտրաէներգիայի արտադրություն առանց հանածո վառելիքի, հիդրոէլեկտրակայանների շահագործման ընթացքում օդային ավազան աղտոտող նյութերի ու ածխաթթու գազի արտանետումների բացակայություն,
- վերականգնվող էներգետիկ ներքին ռեսուրսների օգտագործում և վառելիքի ներմուծումից կախվածություն բացակայություն.
- էլեկտրաէներգիայի արտադրման ռեժիմի ճկունություն և էներգահամակարգում պիկային բեռնվածությունների հարթեցում:

2. Գետերը, որոնց վրա դեռ խորհրդային տարիներին կառուցվել են հիդրոէլեկտրակայանների կասկադները, (ինչպիսիք են Դնեպրը, Դնեստրը, Կուրը, Հրազդանը, Ուրտանը) ենթարկվել են էկոհամակարգերի գրեթե անդառնալի

դեգրադացիայի և դրանց վերականգնումն անհնար է առանց ամբարտակների վերացման:

3. Ներկայումս հիդրոէլեկտրակայանների և հիդրոակումուլյատիվ էլեկտրակայանների (ՀԷԿ և ՀԱԷԿ) շինարարությունը և հիդրոէներգետիկայի զարգացման պլանները չեն անցնում էկոլոգիական ներգործության պատշաճ գնահատումներ և դրանց կենսագործումը կհանգեցնի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության աճի և էկոհամակարգերի դեգրադացիայի:

Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գոյություն ունեցող պրակտիկան հիմնականում կենտրոնացած է կենդանի օրգանիզմների առանձին տեսակների ու նրանց բնակեցման փոքր տարածքների վրա ներգործության վրա և չի ապահովում շրջակա միջավայրի վրա ներգործության օբյեկտիվ գնահատումը ամբողջ էկոհամակարգի կտրվածքով:

Կլիմայի փոփոխության մեղմացման նախագծերում հիդրոէներգետիկան դիտարկվում է որպես էներգիայի աղբյուր, որը չունի ջերմոցային գազերի արտանետումներ, մինչդեռ կլիմայական համակարգի վրա ազդեցություն է տեղի ունենում ոչ միայն հիդրոէլեկտրակայանների և ջրամբարի շահագործման ընթացքում, այլ նաև սարքավորումների արտադրության, շինարարության և ՀԷԿ-ը շահագործումից հանելու ընթացքում: Սա հանգեցնում է սխալ տեսակետի, որ հիդրոէներգետիկան բացասաբար չի ազդում կլիմայի վրա:

4. Արևելյան գործընկերության երկրներում չկա նորմատիվային, իրավական և մեթոդական բազա շրջակա միջավայրի վրա հիդրոէներգետիկ պլանների ծրագրերի ու նախագծերի ներգործության գնահատման ընթացքում էկոհամակարգային մոտեցման կիրառման համար:

Գետերի էկոհամակարգային ծառայությունները մնում են ուշադրությունից դուրս, դրանց տնտեսական արժեքը չի արժևորվում և հաշվի չի առնվում, ինչը հանգեցնում է դրանց կորստի ու հիդրոէլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայի էժանության անհիմն պատկերացումների:

5. էկոհամակարգային մոտեցման կիրառումը (էկոհամակարգերի և դրանց ծառայությունների նույնականացումն և գնահատումը, հիդրոէլեկտրակայանների ազդեցության պատճառով դրանց փոփոխությունների և կորուստների կանխարգելումը) հանդիսանում է հավասարակշռված հիդրոէներգետիկայի անցման գործիք:

6. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացման ներկա վիճակը, էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող ավելցուկային էներգիայի կուտակման նոր հնարավորությունները և դրանց ճկուն օգտագործման հնարավորությունները վկայում են, որ գոյություն ունեն էներգամատակարարման լուծումներ՝ հիդրոէլեկտրակայանների փոխարեն:

Հաշվի առնելով վերը նշվածը, մենք կոչ ենք անում

1.Արևելյան գործընկերության երկրների կառավարություններին.

-որպես ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներ մշակել նորմատիվաիրավական բազա՝ էկոհամակարգային մոտեցումը ՌԷԳ և ՇՄԱԳ ընթացակարգերում ներդնելու համար, մասնավորապես, հիդրոէներգետիկ պլանների ծրագրերի ու նախագծերի համար,

- շրջակա միջավայրի վրա հիդրոէլեկտրակայանների ազդեցությունը գնահատելու կանոններում ներդնել «ամբողջական շղթայի»(full cycle) ներգործության մեթոդաբանությունը և կիրառել այն կլիմայի վրա ազդեցության գնահատման համար,

-արագացնել ջրային ռեսուրսների միասնական կառավարման իրականացումը, հաշվի առնելով բոլոր ջրօգտագործողների կարիքները և էկոհամակարգերի և էկոհամակարգերի ծառայությունների պահպանման անհրաժեշտությունը:

-արգելել հիդրոտեխնիկական կառույցների, ներառյալ ամբարտակների կառուցումը ազատ հոսող գետերի հուներում՝ որպես բնական հոսքը խաթարող կառույցներ և ստեղծել գետերի բաց ցանկ, որոնց վրա արգելվում է ցանկացած հիդրոէներգետիկական կառույցների կառուցումը,

-հրաժարվել հիդրոէլեկտրակայանների ստեղծմանը նպատակաուղղված տնտեսական խթաններից («կանաչ սակագներ», հատուկ հարկեր և այլն),

-ապահովել ջրավազանային մակարդակում էկոհամակարգային մոտեցման կիրառումը գետավազանների անդրսահմանային կառավարման համար՝ էկոհամակարգերի ծառայությունների կորստի փոխադարձ ճանաչմամբ, դրանց փոխհատուցման, ներդնելով «ադտոտողը վճարում է» սկզբունքը, փոխհատուցման միջոցների նպատակային օգտագործմամբ, հարմարեցնելով (ադապտացնելով) գոյություն ունեցող արտադրությունները էկոհամակարգային մոտեցման պահանջներին, հաշվի առնելով էկոհամակարգերի ծառայություններից օգտվող բոլոր բնօգտագործողների կարիքները,

-նպաստել Դնեստերի գետավազանում Ուկրաինայի և Մոլդովայի միջև անդրսահմանային համագործակցություն փորձի տարածմանը և կիրառմանը Արևելյան գործընկերություն մյուս երկրների գետավազաններում:

2. Արևելյան գործընկերության երկրների ճյուղային նախարարություններին.

-ապահովել մեթոդական բազայի՝ ներառյալ տնտեսական բաղադրիչի մշակումը, ՌԷԳ-ի և ՇՄԱԳ-ի ընթացակարգերում հիդրոէներգետիկայի պլաններում, ծրագրերում ու նախագծերում, ինչպես նաև գետավազանային կառավարման պլաններում էկոհամակարգային մոտեցումը ներդնելու համար՝ հաշվի առնելով Եվրոպական փորձը (<https://biodiversity.europa.eu/maes>),

-նպաստել էկոհամակարգերի համակարգված ուսումնասիրություններին՝ էկոհամակարգային ծառայություններն ավելի ամբողջական հաշվառելու համար, նպատակ ունենալով դրանց վերականգնումն ու պահպանումը, ինչպես նաև ապահովելու համապատասխան մասնագետների պատրաստումը,

-նպաստել հիդրոէներգետիկայում էկոհամակարգային մոտեցման և ջրային ռեսուրսների ամբողջական կառավարման ուսումնասիրություններին, ինչպես նաև այդ ուսումնասիրությունների ինտեգրմանը եվրոպական, մասնավորապես ժամանակակից մեթոդների կիրառմամբ՝ առանձին տարածքներում հիդրոլոգիական ցիկլի ուսումնասիրություններում՝ օգտագործելով լիզիմետրեր, ինչը նոր հնարավորություններ է բացում գետավազանային կառավարման ասպարեզում,

-իրականացնել գետային էկոհամակարգերի մշտադիտարկում ինչպես հիդրոէներգետիկ օբյեկտների ազդեցության գոտիներում, այնպես էլ գետավազաններում,

-ներդնել էկոհամակարգերի վերականգնման լավագույն փորձերը,

-օրենսդրորեն ներդնել հիդրոէլեկտրակայանների կողմից ջրօգտագործման նորմավորման կանոնները «մնացորդային սկզբունքով», այսինքն՝ նշելով միայն էկոլոգիական թողքի՝ ռեժիմը գետի հունում, որի համապատասխանությունն ու ապահովումը ավտոմատացնել,

-անցկացնել լայն կրթական ծրագիր բնակչության շրջանում տեղական, ազգային և միջազգային մակարդակներում էկոհամակարգի արժեքավորության և գետերի էկոհամակարգային ծառայությունների արժեքի, դրանց կորուստի տնտեսական և սոցիալական հետևանքների մասին:

3. Եվրամիությանը.

-նպաստել Արևելյան գործընկերության երկրներում ջրային ռեսուրսների կառավարման բարեփոխմանը, ջրավազանային սկզբունքով ինտեգրված կառավարման ներդրմանը,

-խթանել հիդրոէներգետիկական ոլորտում էկոհամակարգային մոտեցման ներդրմանը, աջակցել գետերի և հարակից էկոհամակարգերի էկոհամակարգային ծառայությունների հետ կապված գիտական և կրթական ծրագրերին,

-խթանել Արևելյան գործընկերության երկրներում հիդրոէներգետիկայի զարգացման հասարակական հսկողությանը և եվրոպամետ փոփոխությունների նկատմամբ հասարակության ազդեցության ուժգնացմանը,

-նպաստել հիդրոէներգետիկայի հետագա զարգացման բնագավառում ողջամիտ փոխզիջումների որոնմանը՝ առկա էկոհամակարգերը պահպանելու և խաթարված էկոհամակարգերը վերականգնելու համար:

,